





ծերը չեն յարատեւեր: Բայց Գարրիէլ այժմ հրատարակելով անուանացանկերէ հիմը կը դնէ իր ապագայ գործունէութեան: Ան կը ցանկէ «Հանդէս Ամսօրեայ», «Բազմավէպ», «Արարատ»-ի եւ այլն յօդուածներն եւ անոնց մէջ շօշափուած ուրիշ մատենագրական տեղիքները, իր կարգին ուրիշ գրքեր ու թերթեր: 1907/8ին կը սկսի յիշատակարաններու հաւաքածոյը:

Հետեւեալը լսած ենք Հ. Ակինեանի բերնէն. տակաւին պատանի էր նա, 1897ին, երբ լոյս կը տեսնէր «Հանդէս Ամսօրեայ»-ի Հովտեմբեր-Դեկտեմբեր թուերուն մէջ Գր. Սարգսեանի «Մովսէս Սորենացու աղբիւրներէ մասին» յօդուածաշարքը, հետաքրքրուած՝ խորատուգուած անոնց ընթերցումին մէջ, մոռցած է պատրաստել «Երկրաչափութեան» դասը: Կը հարցնէ ուսուցիչը՝ Հ. Բառնարաս Պիլէգիլիճեան եւ նա ոչինչ կրնայ պատասխանել. պատճառը կը հարցնէ. ան աչքերը սեղանին խոնարհեցուցած կը խոստովանի մեղքը: Ուսուցիչը, որ չէր սպասեր այս պատճառարանութեան, սիրոյ ապտակ մը կու տայ բանասէր-պատանուոյն:

Սոյն ուսուցիչը, տասը տարի ետքն ըսած է իր աշակերտին, երբ սա արդէն 1901ի Օգոստոս 15էն ի վեր անդամակցած էր Միաբանութեան. «Կը տեսնեմ որ գրելու չնորձք ունիս. ես առ այդ չեմ պատրաստուած, եթէ օրինակողի պէտք ունենաս, առանց քաջուելու եկուր ինձի»: Թէպէտ նա այդ պէտքը չունեցաւ, բայց մեծապէս ազդուած է իր ուսուցչին այս խոնարհամիտ պատրաստակամութենէն:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՍՊԱՐԵՋԻ ՎՐԱՅ**

Հ. Ակինեան փիլիսոփայական-աստուածաբանական ընթացքն աւարտելէն յետոյ 1907 Մայիս 20ին քահանայ կը ձեռնադրուի եւ կը մտնէ գործնական կեանքին մէջ: Թէպէտ ցոյց տուած էր արդէն աշակերտական շրջանին իր բերումը դէպի բանասիրական-մատենագրական-պատմական ուսումնասիրութիւններ, բայց եւ այնպէս տրամադրեց ինք զինքը Միաբանութեան Վարչութեան, գործածել զինքն ուր եւ ուզէ: Իսկ ինքը ինքնակամ մերձեցաւ «Հանդէս Ամսօրեայ»-ի խմբագրութեան, որուն թղթակիցն էր 1903էն ի վեր: Միաբանութիւնն, որ ու-

րախուժեամբ ողջունած էր երիտասարդ բանասէրի կարողութիւնները, քաջալերեց ամէն կերպ, որ յարատեւէ եւ արդիւնաբերէ այդ մարդին մէջ: Հ. Ակինեան պաշտօնավարեց Մայր Վանքին մէջ: Վարչութիւնը յանձնեց իրեն այնպիսի պաշտօններ, որոնք չէին խափաներ իր գրական գործունէութիւնը, որչափ ալ կը խլէին իրմէ ժամեր:

Կարգուեցաւ ուսուցիչ Կղերանոցի (Հայերէն լեզու, Պատմութիւն գրականութեան, Եկեղ. Պատմութիւն, Իրաւունք եւ այլն), միաժամանակ Փոխ-տնօրէն (1908—1911), Տնօրէն (1916—1920), Մատենագրարանապետ եւ խմբագրապետ «Հանդէս Ամսօրեայ»-ի 1909էն ի վեր: Խմբագրութիւնը «Հայագիտական այս հոյակապ Պարբերակներին... լի կարեւոր ուսումնասիրութիւններով» կը վարէ նա տոկոսներէն մինչեւ այսօր: Միայն Վիեննայէն բացակայութեան պարագային եւ այն դիտական ուղեւորութեանց բերումը կը յանձնէ զայն իր ձեռնհաս եղբայրակիցներէն մէկուն կամ միւսին: Վերջապէս կ'ընտրուի Անդամ Ընդհանուր Վարչութեան 1931էն ի վեր, Մեծաւոր Մայր Վանքի (1931—1937), Հիւրընկալ եւ այլն:

Ուսուցչութեան բարձր պաշտօնը, մանաւանդ դասախօսութիւններ հայ Հին Մատենագրութեան Պատմութեան մասին իր սրտին շատ մօտ են: Տակաւին այսօր ալ այս 70ամեայ ալեւոր բանասէր Վարդապետը սիրով կ'ընդառաջէ այս տեսակէտէ ամէն խընդրանքի: Ինքը չէ ուզած երբեք իր սենեակը քաջուած եւ գրքերու մէջ ընկղմած բանասէր մ'ըլլալ, այլ հասցնել սերունդներ հայ Մշակոյթին մեծ գործը շարունակելու համար: Իր այս բարձր ծրագիրն իրագործելու համար լաւագոյն միջոցն էր անձուկ կապլ Միաբանութեան Կղերանոցին հետ — տարիներով վարած Փոխ-տնօրէնի եւ Տնօրէնի պաշտօններու բերումը: Եւ այս տարիներուն իր տարած աշխատանքը չէ մնացած ապարդիւն: Միաբանութեան միջին սերունդն, որ այսօր կը գործէ իրր գրչի Մշակ իր աշակերտներն են: Մեծ չէ անտարակոյժ ասոնց թիւը, վասն զի Համաշխարհային պատերազմին հետեւանքով չէր ունեցած ձեռքին տակ բաւարար աշակերտութիւն:

<sup>4</sup> J. Lebon, Ի Revue d'Histoire ecclesiastique 33 (1937), 878.

Ապագային ալ կը տեսնենք որ Հ. Ակինեան ոչ միայն գրով կը ջամբէ իր ուսումնասիրութիւնները գրական մարդին մէջ իր ընթերցողներուն, այլ եւ վանքի շրջանակէն դուրս իրր Հրապարակախօս լսելի կ'ընէ իր խօսքը բազմազան ունկնդիրներուն միշտ երիտասարդական աշխուժով տարուած իր նիւթէն: Ուր ալ, քանիցս անգամ ալ որ խնդրուած է, ընդ առաջ եկած է ամենայն պատրաստակամութեամբ. Վիեննա, Բուպապէտ, Պլովդիւ (Բուլղարիա), Մոսկուա, Երեւան, Համբուրգ, Բեռլին, Պարիս, Մարսէյլ, Բոմոն, Միլան, Բէյրութ, Չաչէ, Հաստի, Դամասկոս, Հայֆա, Երուսաղէմ, Լէպ, Դամասկոս, Հայֆա, Երուսաղէմ, Ենթա, Կիպրոս (Նիկոսիա, Լաոնաքա, Մելեթոնեան Հաստատութիւն), Գահիլէ, Աղեքսանդրիա եւ այլն: Նա ինքնամատոյց բեմ չէ բարձրացած, խօսած է նա քանիցս որ հրաւիրուած է, առանց խորութիւն դնելու հրաւիրողներու մէջ: Ան իր խօսքը կ'ուղղէր իր ազգայիններուն, մեծին եւ փոքրին, ազգասիրական զգածումներով — հայ Մշակոյթը ծանօթացնելու, հայ հոգին արծարծելու:

**ՄԱՏԵՆԱԳՐԱՆԱԳԵՏ**

Հ. Ակինեան արդէն պատանեկական հասակին երեւան կը բերէր իր մէջ գրքեր սիրելու եւ գրքերով գրադելու հաճոյքը: Կը սիրէր Կղերանոցի մատենագրարանի գրքերն աչքէ անցնել, դասաւորել, ցուցակագրել: Կը պատահէին դէպքեր, երբ Գրադարանապետ վարդապետը կը կարօտէր Մեծ Մատենադարանին համար օգնական ձեռքերու Կղերանոցի յառաջացած աշակերտներէն: Յարանոցի յառաջացած աշակերտներէն էր, անոր ձեռնակ Մատենագրարանապետն էր, անոր ձեռնակ Հ. Ակինեանը: Երբ սա դպրոցական ընթացքը կ'աւարտէ, ինքնակոչ գրադարանապետին օգնական կ'ըլլայ: Այս շրջանին է որ նա հայերէն եւ հայագիտական գրքերն ու լրագիրները ծայրէ ծայր մի առ մի աչքէ կ'անցնէ եւ իրեն համար կարեւորները կը նշանակէ իր նիւթերու տետրակին մէջ: Մատենագրարանապետ կը կարգուի նա 1920ին:

Միւլթարեան Մատենագրարանը կ'ամփոփէ իր ծոցին մէջ 150.000 հատոր—5 բաժանումներով:

1. հայերէն ձեռագիրներ.
2. հայագիր գրքեր. ա. հայերէն. բ. հայագիր տաճկերէն.
3. լրագրական բաժին.
4. օտարալեզու հայագիտական-արեւելագիտական:
5. օտարալեզու գրքեր:

Մատենագրարանին արժէքաւոր բաժիններն են առաջին չորսը: Ամէն աշխատանք կը տարուի անցնել ձեռագիրներու թիւը, հաւաքել հայագիր ամէն գիրք եւ կազմել հայ լրագիր-պարբերակներու կատարեալ հաւաքածոյ մը:

Այս հաւաքածոներն անցնել, դասաւորել, ցուցակագրել եւ պահպանել կը պահանջէ թէ՛ ժամանակ թէ՛ աշխատանք եւ թէ՛ շրջահայեցութիւն ու հասկացողութիւն: Հ. Ակինեան, որ ունէր իր վրայ նաեւ «Հանդէս Ամսօրեայ»-ի խմբագրութիւնն եւ ուրիշ կողմնակի պաշտօններ, մասնաւորապէս իր բանասիրական աշխատանքները, կրցաւ ոչ միայն Մատենագրարան իր վիճակին մէջ պահել, այլ եւ անցնել եւ ցուցակագրել: Այս յաւելումներուն հետեւանքով ընդարձակուեցան գրադարանի սրահները, շինուեցան կուէցան գրադարանի սրահները 1949ին չնորպահարաններ ու դարաններ 1949ին չնորպահարաններ ու դարաններ Արհիպ. Գերապ. հիւ օժանդակութեան Արհիպ. Գերապ. Աբրահամ, որ նախանձախնդիր է ազգային Մշակոյթին:

Իր ուղեւորութիւններու ժամանակ (մասնաւորապէս Երեւան) հաւաքեց նա բազմաթիւ հատորներ եւ ուղարկեց Վիեննա: Հազար հատորներ եւ կազմել գրքի լիակատար հաւաքածոյ Լիբանան եւ Միւրիա հրատարակուած գրքերու եւ լրագիրներու, զոտարակուած գրքերու եւ լրագիրներու, զորոնք Վիեննա ուղարկելէ յետոյ 1943ին Միւրիա ձեռ ցուցահանդէսի գրաւ 1943ին Միւլթարեան Վարժարանի սրահներուն մէջ:

Հ. Ակինեան իր ուղեւորութեանց ժամանակ կ'ունենար իրեն հետ ցուցակներ հայ հին տպագրութեանց, լրագիրներու, նաեւ գրքերու, որպէս զի ընտրել կարենայ Վիեննայի Մատենագրարանին պահած գրքերը: Չմտաւ Վանքի եւ Երուսաղէմի Մատենագրարաններու վանքի եւ Երուսաղէմի Մատենագրարաններու վանքի տպագիրները (1512—1812) մի առ մի հին տպագիրները (1512—1812) մի առ մի հին տպագիրները եւ կը ցուցակագրէ մանրաւորէ կ'անցնէ եւ կը ցուցակագրէ մանրաւորէ կ'անցնէ այն գրքերը, որոնք կը պահուին Վիեննայի հաւաքածոյին մէջ: Ասոր նպատակն էր լրացնել Հ. Գ. Գալէմբարեանի

կազմած Պատմութիւնն հայ տպագրութեան (տակաւին անտիպ), զոր ժառանգած էր նա լրացնելու եւ տպագրելու համար: Գտած է բազմաթիւ անձանօթ տպագրութիւններ:

**ԳԻՏԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Հ. Ակիւնեան 17 տարի յառաջ լքած էր հայրենի բոյնը եւ դիմած Մխիթարաց յարկը եւ այնուհետեւ չէր տեսած իր Հարազատները: Ուստի իբր առաջին ճանապարհորդութիւն կը փափաղի իր որդիական պարտականութիւնը կատարել մեկնելով 1912ին Արգոլին ծնողաց այցելութեան համար: Հաղիւ սակայն 2-3 ամիս կարօտակէց ծնողաց մօտաւորութիւնը վայելած եւ ըմբոջինամ ծննդավայրին դարնանային բարեխառն օդը, կը փութայ Կովկասի հայաշատ կենդրոններ ժողովելու հայերէն ձեռագիրներ, գրքեր ու թերթեր եւ այցելելու կովկասեան շարաթացեալ սրբավայրերը: Ամառը կը հասնի Էջմիածին, ուր Մխարանութեան կողմէ սերով կը հերքենկալուի: Կը դարձանան ի տես Զամեայ երիտասարդ բանասէրին, զոր բոլորովին տարէց կերեւակայէին, ինչպէս կ'արտայայտուի Գալուստ Տէր-Մկրտչեան՝ ծանօթ «Մխարան» գրական անունով: Այս ժամանակ տեղի կ'ունենայ կաթողիկոսական օժուճը Գէորգ Ե. Սուրենեան վեհախառնին: Պետերբուրգէն իրրեւ պատգամաւոր կը հասնին Պրոֆ. Վարդանեան եւ Պրոֆ. Ն. Աղոնց: Օժման հանդիսութիւններն աւարտելէն յետոյ վերջիններս կը փափաղին այցելել Գառնի եւ Այրիվանք առաջնորդութեամբ Մեսրոպ Արքեպ. Տէր-Մովսէսեանի եւ Գարեգին Վրդ. Յովսէֆեանի, որոնց կը միանայ նաեւ Հ. Ակիւնեան: Վերադարձին Պրոֆ. Վարդանեան, Աղոնց եւ Հ. Ակիւնեան կ'անցնին Անի, ուր Ն. Մաս կը կատարէր իր դիտական պեղումները: Անիի Պեղիչը կը յայտարարէ Հ. Ակիւնեանի. «Իմ հիւրս ես, որչափ ժամանակ կը մնաս Անի»: Երկու օր յետոյ հրաժեշտ կու տայ իր հերքենկային այցելելու Բագնայր, Հոտոմոսի վանքը, Երերոյք եւ ուրիշ հնավայրեր: Հ. Ակիւնեան հայրենաբաղձի մը կարօտով կը համբուրէր հինաւուրց սրբատաշ քարերն եւ կը դիմէր գաննք ճարտարագէտ պատմաբանի մը աչքերով, որոնք այնչափ բան կը պատմէին իրենց անցեալին...: Հա-

կառակ սուղ ժամանակին, որ արամազրուած էր Հ. Ակիւնեանի, չուզեր նա գանց ընել Տիգրիս հայաշատ քաղաքը: Հոս կ'այցելէ ի մէջ այլոց վրական Աղբ. Թանգարանն, ուր իր առաջնորդը կ'ըլլայ ծանօթ գիտնական Զաւարթապիլի: Կարելի է երեւակայել վերջնոյս ուրախութիւնն, որ առիթը կ'ունենար անձնապէս ծանօթանալու Վրաց Կիւրիոն Կաթողիկոսի մենագրութեան այսպէս երիտասարդ հեղինակին հետ, զոր իր Վրաց պատմութեան նուիրուած երկասիրութեան մէջ գնահատանքով յիշատակած է:

Հ. Ակիւնեան անյապաղ վերադառնալով Արգոլին ծննդավայրը կը կատարէ կարճ ուսումնասիրական ուղևորութիւն մը գէպի Արգանուջ ու մերձակայ հնավայրերը, Օպիդա, Գորաչէթ եւ այլն: Գաւառապետը շնորհած էր իրեն արտօնութիւն նոյն իսկ պեղումներ կատարելու: Կը վերադառնայ խոր տպաւորութեան տակ աւար բերելով հետը հայերէն ձեռագիրներ եւ հին տպագրութիւններ: Պէտք է վերադառնար Վիեննա. հայրը կը պնդէր, որ մնայ. բայց մայրը զսպելով հերոսաբար մայրական զգածումներն ընտրութիւնը կը թողուր որդւոյն ազատ կամքին: Վարդապետը 12 տարի անցուցած էր հայրենի օժախին քով, իսկ 17 տարի Մխիթարեան յարկին ներքեւ. կը սերէր ծնողքը, բայց ուզեց հաւատարիմ մնալ իր Մխարանութեան եւ իր սրտի ձայնին, որ կը տենչար վաստակիլ գրական-պատմական ասպարէզի վրայ: Ի վերջոյ կու տայ հրաժեշտի վերջին ողջոյնն իր ծնողքին եւ հարազատներուն ու կը մեկնի Բաթում: Նաև կը մտնէր նա երկու գրքերու արկղներով. մին կը բովանդակէր ձեռագրներ, երկրորդը գրքեր, զորոնք հաւաքած էր Մխիթարեան Մատենադարանի համար: Ունէր հետը նաեւ երկու պատանիներ Մխիթարեան Կղերանոցի համար, զորոնք ապա ինքն առաջնորդեց կրօնաւորական ու քահանայական վիճակին եւ կոչուեցան Հ. Պ. Տ. Պ. եւ Հ. Վ. Ի.:


Հանգստակէտ էր նաև, Սեւ ծովու եզերքով կը դիմէր Օդեսայի ուղղութեամբ՝ առիթն ընծայուեցաւ Հ. Ակիւնեանի այցելել թէղոսիա: Այս տեղ Վենետիկի Մխիթարեաններէն Հ. Տիմոթէոս Տէր Կիւլեան առաջնորդեց հիւրերը աշխարհահռչակ հայ ծովանկարչին՝ Այվազովսկիի նկարներու թանգարանը: Շարունակելով նաւարկութիւնը

գէպի Օդեսա՝ Հոկտեմբեր 30ին կը հասնի Վիեննա:

Հ. Ակիւնեան տեսած էր Էջմիածնի Մատենադարանի բազմահարկ ձեռագիրները, բայց չէր կրցած ուսումնասիրել: Ան կը գգար այնուհետեւ «սրտին մէջ կրծող որդ մը», այսինքն «ցանկութիւնը մանրագին քննութեամբ ծանօթանալու այդ մեծ Հաւաքածոյին»: Վասն զի համոզուած էր թէ առանց մերձուստ ծանօթացած ըլլալու հաղարաւոր հայ գրչագիրներու մէջ թաքնուած անձանօթ գրութիւններու եւ հեղինակներու անկատար պիտի ըլլար իր մտադրած ծրագրին իրագործումը, կ'ուզեմ ըսել յօրինել Հայոց Մատենագրութեան Պատմութիւն մը: Երկու տարի չանցած կը ծագի Ա. Համաշխարհային պատերազմը եւ կը թաղէ առ այժմ անոր այս սերնդը եւ կը թաղէ առ այժմ անոր այս գեղեցիկ իղձերը: Միշտ լաւատես՝ Հ. Ակիւնեան չ'ընկճիր արհաւիրքի այս տարիներուն, այլ բուն թախով կը ձեռնարկէ վերոյիշեալ երկասիրութեան: Կղերանոցին Տեսուչն է նա. «Հանդէս Ամսօրեայ» կը դադրի առժամապէս, երթեւեկութիւնները կը կասին: Թէպէտ սահմաններու վրայ կը գոռային թնդանօթները, թէեւ Թուրքիայէն կը լսուէին տարազիրներու աղաղակները, բայց եւ այնպէս նա հետեւեցաւ այն սկզբունքին թէ ուր օգնել չեմ կարող, զուր է ձեռքերով մագերը ձողել: Գաղտնի դրամ կը հանգանակէ տարագիրներուն եւ հայ գեղիններուն օգնելու համար. օգնութեան հասնելու անոնց, որոնք ծանօթութեան հասնելու անոնց, որոնք իր օժանդակութիւնը կը հայցէին: Յանձն առաւ հայ գեղիններու թղթակցութեանց գրաքննութիւնն, անոնց հասցէներուն ծանօթանալու եւ պիտոյքներն իմանալու համար եւ նալու եւ պիտոյքներն իմանալու համար ապա կառավարութեան թոյլտուութեամբ դրամով ու գրքով անոնց սփոփանք ջամբելու: Ինքը չարտասուեց, բայց սրբեց արտասուող աչքեր, որքան հնարաւոր էր այն տարիներուն: Ուզեց այցելել գեղիններու ծամտարներ, բայց Մխարանութիւնը յանձնեց այդ գործը ուրիշներուն: Այս հանգամանքներու մէջ գրեց նա 1250—1700 շրջանի գրական պատմութիւնը, որովհետեւ գրչագիրներն առաւել թուով այս շրջանէն են. ուզեց ան նախ այս շրջանի գրական պատմութիւնն ուսումնասիրել իրրեւ պատրաստութիւն գրական արչաւանքներու համար:

Այս աշխատութեան ընթացքին է որ աւելի գգալի կը դառնայ իրեն «անհրաժեշտ

հարկը՝ մանրակրկիտ երկասիրութիւնս հիմնել ձեռագրական մեծ Հաւաքածոյքի մը վրայ, ճշդելու համար սկզբնական աղբուրներու հարազատութիւնը, ստուգելու մէջ միջնորդութիւնը խորագիրները վստահելի օրինակներու մէջ եւ մատնանշելու անոնց հնագոյն



Հ. Ակիւնեան 1912ին

սկզբնագրերը», ինչպէս կը գրէ նա ինքն<sup>5</sup>: Այս նպատակով կատարած ճանապարհորդութիւնը գէպի Վենետիկ-Մ. Ղազար մնացած էր զժրախտաբար ապարդիւն:

Հ. Ակիւնեան այժմ իր ըղձաւէտ աչքերը կ'ուզէր գէպի Էջմիածին: Իր այս փափաղը կարելի էր համարել լոկ երազային. եւ սակայն անկարելին կը դառնայ օր մը հնարաւոր շնորհիւ Միմոնիկ ֆիլոսոֆիանի, որ Պորչուսի հայաստանի Բերլինի առեւտրական հրդային Հայաստանի Բերլինի առեւտրական տանքներն ու ծրագրերը կը գնահատէ եւ կը խոստանայ ամէն աջակցութիւն ասոր յաջողութեան համար: Փիլոսոֆեան անձամբ կը գրութեան համար: Փիլոսոֆեան անձամբ կը ներկայացնէ ինքիւրքը Ա. Մխարանիկեանին ի

<sup>5</sup> Տե՛ս Համաստ Տեղեկագիր դիտական ուղևորութեան ի Հայս. «Հանդէս Ամսօրեայ», ԽԳ (1929), 192—208, մատնանշ. 193:







խախտելի ինքնավստահութիւնն, այսինքն գիտնալ արուեստն օգտագործելու անազան, անկատար եւ հակասական վաւերացումները: Հ. Տամարատի ունի այս ինքնավստահութիւնն այնպիսի լիութեամբ մը, որ գուցէ կ'անցնի հարկաւոր եւ բաւարար չափը: Դեռ աւելին. այս ինքնավստահութիւնը կը ներ- շնչէ անոր կասկածոտ ու գերագրգիռ ազգա- սիրութենէ մը յառաջ եկած ոգեւորութիւն մը, որ կը վախնայ դոյզն հակաճառութենէ: Կը թուի թէ յարգելի Հեղինակն անկարող է ըմբռնելու որ կրնայ մէկը յանդգնել վրական եկեղեցւոյ աւանդութիւնները տարակուսի տակ ձգել առանց տգիտութենէ, թեթեւա- տութենէ, չարամտութենէ կամ կողմնակցա- կան ոգիէ տարուած ըլլալու: Պիտի ուղէի գտնել կերպ մը անոր հասկնելու առանց սակայն զինքը դժկամակ ընելու թէ կը սխալի. ո՛չ Ջաւախով, ո՛չ Մառ, ո՛չ Հ. Ա. Պարմիերի, ո՛չ ռեւէ լուրջ քննադատ մը կը խորհի սեւցնել վրական ազգին փառքը. բայց աստի իւր երկրին եկեղեցական պատմու- թիւնը կը մնայ բաւականաչափ գեղեցիկ եւ ձգիչ առանց այն կեղակարծ պաճուճանքի, գործնք կը ջանայ նա պահպանել: Բայց նկա- տելով այն եռանդն, որով այս մեծանուն գիտնականներուն խելք սորվեցնելու ելած է, իրաւունք ունինք մեծապէս վախնալու որ ի գուր կը փորձենք զանոնք պաշտպանել: Ակնրեւ կ'երեւայ թէ տրամադիր չէ ընդու- նելու որ մենք ալ ունենանք վրական հար- ցերու մասին վճիռ բերելու օրինաւոր ազա- տութիւնը, գոր ինքն ալ կը կիրարկէ բաւա- կան կծու համարձակութեամբ միւս երկր- ներու դարաւոր հաւատարեաց նկատմամբ...:

«Այն ամէն հարցերու մէջէն, ուր վտանգ կայ յակամայս դժոխութեան առիթ տալու Հ. Տամարատիին է հրատապ հարց մը ստուգելու Կիւրիոսի, Մծխէթայի նշանաւոր կաթողիկոսին անձնաւորութիւնը, ծանօթ Արեւմուտքի մէջ Ս. Գրիգոր Մեծ Քահա- նայապետին հետ ունեցած թղթակցու- թեամբ: Այնպէս կը թուի թէ վրացի հայրե- բնաստէրները չեն ախորժիր որ իրենց խօ- սուի այն Կիւրիոսի մասին, որ բաժնեց իրենց եկեղեցին Հայերէն, որոնք միարնեայ եղած էին եւ զայն վերադարձուց կաթողիկէ ա- ւանդութեան հոսանքին...: Գալով վրացի տարեգիրներու եւ ժամանակագիրներու, որոնք տեղական հին աւանդութեան յետին

կարօտութեան մէջ ստիպուած ըլլալով յի- նուր Ուխտանէսի եւ ուրիշ հայ մատենագիր- ներու վրայ, կարծեցին միամտօրէն թէ յա- ջողած են զանոնք անդիտանալ, կամ իրրեւ անկարելի նկատել օգտագործելու այդչափ յայտնի կողմնակալ վկայութիւնները<sup>11</sup>»:

Հակառակ Հ. Տամարատիի կը կցէ P. Peeters իրը շարունակութիւն իր իրապէս գնահատական քննադատութիւնը Հ. Ակի- նեանի վերոյիշեալ երկասիրութեան մասին. «Մեծ Հ. Ներսէս Ակինեան կրցած է ապացու- ցանել թէ այդ դժուարին գործողութիւնը սակայն իրականալի է: Իր կենսագրական ու պատմական ուրուագիծը կը սկսի յառաջըն- թաց երկայն ուսումնասիրութեամբ, որ գրքին կէսէն աւելի կը գրաւէ (էջ 1—154): Բուն յառաջարանին մէջ կը նշմարուի մանաւանդ շատ սեղմ քննութիւն մը երկու գլխաւոր աղ- բիւրներու մասին — Ուխտանէս պատմագիր՝ եւ նշանաւոր հաւաքածոն «Գիրք թղթոց» անուամբ ծանօթ (Տիգրիս 1901): Այս վաւե- րագիրներն իրը պատմական աղբիւրներ գոր- ծածելու եւ միեւնոյն ժամանակ անոնց վկա- յութեան արժէքը ցուցնելու համար հարկ էր սկսիլ բաւական կանուխ ժամանակներէ, խօսելով այն պարագաներու մասին, որոնց յաջորդեց այն պրկեալ ու խառնաշփոթ վի- ճակը, զոր ասոնք (այս վաւերագիրները) կը միշտակեն: Հեղինակին տեսակէտներն են պայծառ, փաստացի, լաւ կապակցեալ, բո- լորովին աւարկայական, թէպէտ եւ երբեմն քիչ մը խիստ քաղկեդոնական ուղղափառու- թեան ներկայացուցիչներուն համար, ինչպէ՞ Յովհաննէս Բաղարանցի կաթողիկոսը, որոնք բիւզանդական եկեղեցւոյն մօտենալով դժբախտարար այնպէս կարծուեցան թէ ազ- գային շահերուն հակառակ ազդեցութեան մը կը ծառայեն (տես մանաւանդ էջ 148):

Հ. Ա. Կինեան կը վերաբերուի Կիւրիոսի անձին հանդէպ այնպիսի բարեացակամ հա- մարձակութեամբ մը, որ ամենահամալիրի ուղղամտութիւն մը կ'արտայայտէ: Կարելի էր աւելի լաւագոյն կերպով միացնել բնա- գիրներու յառաջբերումը եւ անոնց իմաստը չբռնազրոյսելու հոգը: Բոլոր այս նշանակա- լից ուսումնասիրութենէն կը յայտնուի թէ վրացիք Հայերուն հետ ունեցած իրենց յա- րաբերութիւնը խզած են վարդապետական խնդրոյ մը համար, որուն մէջ անոնց հե-

<sup>11</sup> Անդ, էջ 106—108:

տեւած էին մինչեւ դժուարութեան վայրկեանը: Ուրիշ կողմանէ Հ. Ա. Կինեան կը նկատէ իրրեւ դժուարաւ մեկնուելիք իրողութիւն մը, որ ինչպէս կ'երեւայ Մծխէթայի կաթու- ղիկոսին հնազանդած ըլլայ ամբողջ իր ժողո- վուրդը առանց ակնառու դիմադրութեան (էջ 224): Այս բանը կարելի չէ՞ այնպէս մեկ- նել որ նոյն իսկ Հայաստանի մէջ Քաղկեդոնի ժողովին հանդէպ գաղափարներու նպաստա- լուր հոսանք մը կար, որ Զ. դարուն վերջը կը կարծուի: Ամէն պարագայի մէջ ներեալ էր մտածել թէ այն գրգռիչ պատճառներն, որոնք 607ին Դուրիս ժողովին մէջ միարնեայ մոլեռանդութեան անդամանելի պայթիւնը առաջ բերին, աւելի շուտ տարածուեցան իրարմտութեան կղերին մէջ քան թէ ժո- րարձրատիճան կղերին մէջ: Այս՝ երակէտ ղովորեան գանգուածին մէջ: Այս՝ իրապէս սոսնձով Հ. Տամարատի շուտով միջոցը դրամադ պիտի ըլլար համաձայնելու Հ. Ակի- նեանի հետ, եւ թէ ուղէ որ ազգային անձնա- սիրութիւնը նշմարաւորաբար առջիւ տեղի առայ, պիտի կարենայ իր գործին յաջորդ տպագրութեան մէջ ներկայացնել վրական եկեղեցւոյն պատկեր մը պատկառելի եւ կա- տարելապէս արժանահատ<sup>12</sup>»:

Ինչ որ հոս մեծանուն Բոլլանդեանը հա- կառակ Տամարատիի մասնաւորապէս կը շեշտէ երիտասարդ Հ. Ակինեանի երկասի- ռութեան «բոլորովին առարկայական» եւ «ազգային անձնասիրութենէ», ուրիշ բառով ազգամոլութենէ հետ ըլլալը, որ զիւրաժէտ չէ «ազգային աւանդութիւններն ամէն սա- րակուսէ վեր» համարել եւ զանոնք «կեղա- կարծ պաճուճանքով» գարդարուած տեսնել, կայս միեւնոյն հօգին կը տեսնենք Հ. Ակի- նեանի ամբողջ գրական գործունէութեան մէջ: Եւ սակայն անոր ուսումնասիրութիւն- ներէն ոմանք քննադատութեան շարաչար: Վարդանանց Պատերազմի քննադատութեանը 1931ին, երբ նա հրատարակելու եղաւ Մատենա- իրեն դէմ գտաւ տոհմիկ մտաւորականներէն քիչ բացառութեամբ լոկ ընդդիմախօսներ Տրապարակաւ եւ մամուլին մէջ: Ասոնք գայ- թակղեցան որ դարերով Հայոց քով պաշտա- մունքի առարկայ դարձած Ոսկի Մատենին յանդգնեցաւ մօտենալ «ցուրտ քննադատի» մը գրելը: Կ'երեւի թէ հաճելի է ասոնց մարբիւ ազգային զգածումները փաղաքող

<sup>12</sup> Անդ, էջ 109:

աւանդակներու գեղեցիկ աշխարհին մէջ, մինչեւ որ գայ եւրոպացի գիտնական մը, բա- նայ վարագոյրն եւ ցուցնէ իսկական պատ- մական իրողութիւնը: Բարգէն Մ. Վ. Կիւ- լէսէրեան, որ մերձեցաւ առաջին անգամ Եղիշէի անձին եւ ժամանակին քննադատի անաշտութեամբ, ուղիղ գատողութեամբ է որ կը գրէր. «Քննադատական արժէքը: գեցներ մեր մատենագրութեան արժէքը: Լա՛ւ է իրական արժէքը գիտնալ մեր ունե- ցած մատենագիրներուն, քան թէ նախապա- շարուիլ ասոնց վրայ: Եղիշէի անձին նկատ- մամբ տարակոյսներ յայտնել եւ վարդանանց Պատմութեան շարագրական տարրերը երե- ւան բերել, նշանակել՝ չի ստորնացներ գրուածին յարգը. Ոսկի Մատենան՝ նորէն գրուածին յարգը է. հարկաւոր չէ՞ սակայն, եւ միշտ ոսկի է. հարկաւոր չէ՞ սակայն, գիտնալ թէ ի՞նչպիսի հանքերէ հանուած է այդ ոսկին<sup>13</sup>»: Այսպիսի ձեռնարկ մըն էր Հ. Ակինեանի կատարած ուսումնասիրու- թիւնն ազգային մշակոյթին վրայ գուրգու- թացող Հայու մը գիտակցութեամբ. եւ սա- կայն, ինչ որ նա երկար եւ մանրակրկիտ աշ- խատասիրութիւններով եղրակացուցած էր, դատափետուած է անաշխատ: Հասկանալի է, երբ նա ցաւոտ սրտով ու կսկիծով ստիպուած էրր նա ցաւոտ սրտով ու կսկիծով ստիպուած էր գրել. «Ինչ որ ես եզրակացուցած էի տա- ընդդիմախօսները) կը հերքէին գրչի մէկ հա- թուածով<sup>14</sup>»: Բայց այս եւս ստույգ է, թէ այսպիսի անհիմն դատաւճիռներ օղոյ մէջ միայն կը հնչեն եւ չեն հասնիր բանիմաց ականջներուն. Censura perit, scriptum ma- net (Շոփենհաուէր): Այո՛, ամէն անհիմն դատաւճիռ, ամէն անիմաստ գրաքննու- թիւն կամ գրախօսական կը կորսուի, բայց գրուածքը կը մնայ, եթէ նոյն իսկ տասնեակ տարիներ յետոյ իր արժանավայել գնահա- տանքը գտնէ: Հոս տեղն է բանասէր-պատ- մարանի մը խօսքը. «Թէեւ գրախօսողները գիտնական եւ խելացի մարդիկ են, սակայն ինչ չեն հասկնար տակաւին թէ ինչո՞ւ մենք ինչ չեն հետազօտութիւններ կը կատարենք եւ ինչ հետազօտութիւններ կը կատարենք եւ ինչ հետազօտութիւնն ունին այս հետազօտութիւն-

<sup>13</sup> Բարգէն Մ. Վ. Կիւլէսէրեան, Եղիշէ. քննա- կան ուսումնասիրութիւն (Ազգ. Մատենադարան 57), կիւննա 1909 (գրուած 1896ին), էջ 8, տես եւ էջ Ը: <sup>14</sup> Հ. Ն. Ակինեան, Եղիշէ վարդապետ եւ իւր Պատմութիւն Հայոց պատերազմին՝ քննական ուսում- նասիրութիւն. Մասն Ա. (Ազգ. Մատենադարան 131). վիւննա 1932, էջ 9:



ները. վերջապէս հանձարեղ, բայց ոչ մասնագիտական կրթութեամբ օժտուած մարդիկ են<sup>15</sup>»:

Եւ իրապէս կարող է մէկը գրական այս կամ այն մարդին մէջ մասնագէտ ըլլալ, բայց ոչ մասնագէտ ուրիշ մարդերու մէջ, ուստի անձեռնհաս վճիռ տալու: Հ. Ակինեան չունեցաւ իր մասնագիտութեան մէջ իրեն մրցակից: Եւ սակայն դժբախտաբար այդ ոչ մասնագէտներու վճիռներն անձեռնհաս հասարակութեան կողմէ ծափահարուեցան: Իրաւունք ունէր նա այսպիսի դէպքերուն ըսելու. «Ոչ թէ ապացոյցներու ոյժն է սկար, այլ անոնց (այսինքն՝ աւանդամուկներուն) անդիջողութիւնն է անյաղթելի<sup>16</sup>»:

Քննադատուեցաւ նմանապէս անոր աշխատութիւնը. «Ղեւոնդ երէց եւ Մովսէս Խորենացի», ուր նոյնացուցած էր Ղեւոնդն Մ. Խորենացոյ հետ: Այս տեսութիւնն իրրեւ վարկած ներկայացուցած էր Հեղինակը, ինչպէս կը գրէր Յառաջարանին մէջ. «Ես դրոշմեցի ի գիր իմ ապաւորութիւններս: Չեմ կրնար ստիպել ընթերցողներս, որ անպատճառ ձայնակից ըլլան ինձ: Տպաւորութիւններս կարող են ենթակայական ըլլալ. կարելի է որ ես գոհ եմ պատրանքի մղուած եմ չափազանցութիւններու: Եզրակացութիւններս կը դնեմ բանասէրներու սեղանին վրայ. թող քննեն, փորձեն, տարրալուծեն եւ այնպէս կարեն վճիռը» (էջ Բ):

Փորձ մըն էր Մ. Խորենացոյ անձի լուսաւորութեան եւ ժամանակի ճշգրտման: Եւ եթէ ճիշդ չէ, թէ Մ. Խորենացի նոյն է Ղեւոնդի հետ, բայց է Խորենացին Ղեւոնդէն ետքը, որմէ կ'օգտուի: Եւ կ'արժեն այն ժամանակագրական եւ պատմական մերձեցումները թէ՛ Ղեւոնդի եւ թէ՛ Խորենացոյ մասին: Հեղինակը, որ Խորենացոյ Պատմութեան գրութեան տարին 820ին կը դնէր, այժմ 850էն, նոյն իսկ 885էն ետքը եւ 900էն յառաջ կ'ենթադրէ:

Սակայն իրապէս մասնագէտները գիտեն գնահատել Հ. Ակինեանի աշխատասիրութիւնները: Այսպէս W. Hengstenberg գրախօսելով Եղիշէի ուսումնասիրութեան Բ. Մասը կը գրէ<sup>17</sup>. «Առանց միտ դնելու եղած առար-

կութիւններուն<sup>18</sup> Հ. Ակինեան կը շարունակէ ապացոյցներու յառաջընթացութիւնն իւր բնարանին (These) համար, թէ «Եղիշէ» անունով ծանօթ հեղինակն է. դարուն սկիզբը գրած է սկզբնաբար պատմութիւն մը «Հայոց պատերազմին», այսինքն Մամիկոնեան վարդան Բ.ի, «Քաջ»ի առաջնորդութեամբ 571/572ին ծաղած ապստամբութեան մը, որ Խորով Ա.ի եւ Յուստինոս Բ.ի միջեւ մղուած պատերազմին պատճառ դարձած է: Այս իրրեւ այսպիսի այսօր կորուսած պատմութիւնն ապա շատ ուշ ժամանակ (Թ. դարուն) կեղծարար է մը նոր խմբագրուած է փոփոխելով այնպէս, ինչպէս մեր ձեռքը հասած նշանաւոր պատմութեամբ Մամիկոնեան վարդան Ա. Մեծին եւ ասոր ընկերներուն ապստամբութեան եւ դիւցազնական մահուան մասին, որոնք Յագեղերտ Բ.ի ժամանակ 451ին մարտիրոսացան...: Հ. Ակինեանի այս մանրակրկիտ հետազոտութիւնները զիս իրապէս համոզեցին անոր այս յեղաշրջող «Թէզին» ուղիղ ըլլալուն...: Ի յառաջագունէ պէտք է դուրս հանուի ամէն բան, ինչ որ երեւան կու գայ իր փոխառութիւն Ղազար փարպեցոյ պատմութենէն, որ նուիրուած է Ե. դարու անցուղարձերու: Բաց աստի՛ Հ. Ակինեանի սուր աչքերէն չի վրիպիր ոչ մի տեղիք — այս ապաւորութիւնը կը ստանայ մարդ — ուր չկարենայ կեղծարար խմբագրին ձեռքը մատնացոյց ընել: Ասոր համար թոյլ պիտի տայինք մեզի նոյն իսկ փափաղը յայտնելու, որ իր պսակ ամբողջին Հ. Ակինեան հաճէր Եղիշէի նոր հրատարակութիւն մը պատրաստել, ուր զանազան տատերով մատնանշուած ըլլար, ինչ բան սկզբնագրին սեպհական եղած ըլլալու է եւ ինչ բան (կեղծարար) խմբագրին վերագրուելու է: Բնականաբար նաեւ այն ժամանակ, երբ այս տեղի կ'ունենայ եւ ուղիղ անունները դարձեալ իրենց տեղը կը դրուին, ինչպէս Հ. Ակինեան իր յառաջընթացութիւններուն մէջ արդէն կը

<sup>15</sup> Հմմտ. Byzant. Zeitschrift 35 (1935), էջ 444: Հեղուստերեղ կ'ակնարկէ հոս P. Peeter-ի գրախօսականը՝ նուիրուած Եղիշէի ուսումնասիրութեան Ա. Մասին (Հմմտ. Anal. Bollandiana 53 (1935), էջ 148—154, մասնաւոր էջ 151—154): Գիտնական Բողանդեանն, որուն անձանօթ էին այն ժամանակ Հ. Ակինեանի անդրադոյն ապացոյցները՝ ներկայացուած յաջորդ հատորներուն մէջ, կ'ընդունի արդէն սոյն ուսումնասիրութեան հիմնական եզրակացութիւնը — թէ Եղիշէի պատմութեան սկզբնական առարկան եղած է 572ի պատերազմը, սկզբնական բնագրին կրած փոփոխութիւնը կը փոքրէ այլազգ մեկնել:

<sup>15</sup> Max Sdralek-F. Haase, Die Aufgaben des Kirchengeschichtsllehrers. Breslau 1914, էջ 19.  
<sup>16</sup> Եղիշէ վարդապետ եւ իւր Պատմութիւնն Հայոց պատերազմին. Հատ. Ա. Յառաջարան, էջ Բ—Ը:  
<sup>17</sup> Byzantinische Zeitschrift 38 (1939), էջ 169.

կատարէ, չարատանջ «տորսոյէ» (Torso) մը հայ պատմագրութեան դասական գործի մը հեղեցկութիւնը պիտի կարենանք միայն գուշակել: Խեղաթիւրողին յարարերարար ուշ ժամանակը, որուն այս կորուստը կը պարտինք, երեւան կու գայ ի մէջ այլոց այն պարագայէն, որ նա Պարսկաստանը կը ճանչնայ իրրեւ երկիր մը, ուր բազմակնութիւն կը տիրէր, ինչ որ իսլամութեան ժամանակ եղած է: Եղիշէն գործածած է նաեւ Մովսէս Խորենացի...: Որովհետեւ Հ. Ակինեան այստեղ աղբիւրներու ցուցմունքներով կը խօսի նաեւ ամենարարձր պաշտօններու ներկայացուցիչներու մասին, որչափ կրցած է երեւան հանել, այս գլուխները կը կաղմեն սասանեան պետութեան եւ Հայաստանի ներքին պատմութեան հարուստ բով մը...: Գործիս երրորդ մասն, որուն մեծ հետաքրքրութեամբ ակնդէտ ենք, գլխաւորաբար (Սուտ —) Եղիշէի Դ.—է. գրքերով պիտի դրաղի...: Ով որ բիւզանդական պատմութեան Զ. դարու երկրորդ կէսի շրջանով կը դրաղի, լաւ ըրած պիտի ըլլար, եթէ Հ. Ակինեանի գործը լրանալէն յետոյ քոյն ունենայ»: Եղիշէի այս ուսումնասիրութեան նոյն բարձր գնահատանքն եւ ուրիշներէն, ինչպէս Լըրոն<sup>19</sup> կամ Մլակեր<sup>20</sup>, որ կը կանխագուշակէ թէ «հակառակ պահպանողական յոռետեսութեան Հ. Ակինեանի աղբիւրներու այս քննադատութիւնը յաղթանակը պիտի տանի»: Սոյն հայագէտը Մլակեր գրախօսելով Հ. Ակինեանի «Մատենագրական Հետազոտութիւնները» (Դ. հատոր) կը գրէ ի մէջ այլոց. «Անտարակուսելի է որ Հեղինակն ոչ միայն իր ազգայիններու մէջ կարկառուն դէմք մըն է հայ աղբիւրներու եւ մատենագրութեան դերազանցօրէն տիրապետութեամբ ու քննադատօրէն թափանցումով: Չարմանալի է անոր ընդարձակած իր հայեցողութիւնն, որուն ոչ ոք հասած է, զոր ամէն՝ նկատի առնուելէ սահմանակից ճիւղերուն մէջ ստացած է եւ զոր իր աշխատասիրութեանց մէջ միշտ յաջողագոյն կերպով կրցած է օգտագործել: Վիեննական Միլիթարեան Դպրոցի հաստատուն գեանի վրայ կեցած... նկատողութեան կառնէ միշտ բոլոր նշանաւոր տոհմիկ գիտնականներուն նիւթին հայոց կարեւոր գոր-

ծերը... եւ այսպէս կ'ուսումնասիրէ ամէն խնդիր, բոլորովին սպառիչ կերպով խօսելով անոնց մասին...: Իր քննադատական մտքով Հայագիտութիւնը բարձր գիտական աստիճանի վրայ կը պահէ: Նաեւ անոր համար անոր բարձրագոյն երախտագիտութիւն պարտական ենք<sup>21</sup>»: Ականաւոր արեւելագէտն ու հայերէնագէտ Լըրոն<sup>22</sup> գրախօսելով Հ. Ակինեանի երեք գործերը՝ Մովսէս Գ. Տաթեւացի կաթողիկոս Հայոց յէջմիածին եւ իւր ժամանակը (Վիեննա 1935), Եղիշէ վարդապետ եւ իւր Պատմութիւնն Հայոց պատերազմին, Հատոր Բ. (Վիեննա 1936) եւ Միւլէոն Դպրի Լեհացոյ Ուղեգրութիւն (Վիեննա 1936) կը նշէ մասնաւորապէս թէ ասոնց հեղինակը լաւագոյն եւրոպացի գիտնականներու համարժէք է. «Այս երեք հատորներն ալ Հեղինակին պատիւ կը բերեն: Անոնք օժտուած են մանրամասն ցանկերով, աղբիւրներու ցուցակով եւ նոյն իսկ, առաջին եւ երրորդ հատորները, կատարելապէս ընթեռնելի լուսատիպ պատկերներով: Համառօտ ըսելու համար անոնք եւ չեն մնար ոչ մէկ բանի մէջ ոչ բովանդակութեան, ոչ մեկ կողմէ գիտական գործերէն, հրատարակուած մեր արեւմտեան լեզուներով լաւ աշխատակիցներու ձեռքով»:

Անտարակոյս ամէն տեսութիւն կամ կարծիք, զորոնք արտայայտած է Հ. Ակինեան, անյետակոչելի վճիռներ չեն, errare humanum est, կ'ըսէ լատին առածը: Շատ բան նա ինքն ուղղած է նոր աղբիւրներու հիման վրայ: Անոր սիրած առածներէն մէկն է. dies diem docet. վաղուան օրն այսօրուան սխալները կ'ուղղէ:

Հ. Ակինեանի գործերը գրուած եւ հրատարակուած են հատուածաբար իրրեւ յօդուած: Որչափ ալ իր աչքի առջեւ ունի ուսումնասիրուած նիւթին սկիզբն ու վերջը, սակայն գործ մը որ մաս առ մաս եւ ամսէ ամիս կը գրուի եւ նոյն իսկ տարիներ կը տեւէ, անխուսափելի է տեսութիւններու ինչ տեւէ, անխուսափելի է տեսութիւններու ինչ ինչ մասերու փոփոխութիւնն դէպի լաւը, որովհետեւ նիւթին ընդլայնումը եւ ուսումնասիրութեան մէջ խորացումը, նոր աղբիւրներու յայտնութիւնը, նոր անդրադարձութիւնները, նոյն իսկ մտքի յոգնութիւնն եւ

<sup>21</sup> K. Mlaker / Orient. Literaturzeitung, 1943, էջ 417—418.  
<sup>22</sup> J. Lebon / Revue d'Hist. eccl. 33 (1937), էջ 878—880.

<sup>19</sup> J. Lebon, / Revue d'Hist. eccl. 33 (1937) էջ 879.  
<sup>20</sup> K. Mlaker / Orient. Literaturzeitung, 1938 էջ 174.



ներուն, իր խնամքի տակ առած էր չքաւոր հայ ուսանողները, անպատասխարան անցորդները: Իր վանական խցիկը գրասենեակն եղած էր անտէրներուն առաւօտէն մինչեւ երեկոյ: Անպաշտօն փոխ-հիւպատոսի պաշտօնը կը վարէր այն թշուառութեան օրերուն: Երբ փափագ յայտնուեցաւ, որ Վիեննա ալ հայ հիւպատոս ունենայ, Ա. Ահարոնեան կը գրէր թէ «առ այդ միակ առակ մարդ է. Ակի-նեանը կը ճանչնամ»:

Հայ Գաղութը անառաջնորդ եւ անկազմակերպ էր. Հ. Ակինեան կազմակերպեց պաշտօնապէս իրրեւ «Վիեննայի հայ Գաղութ»: Կազմակերպեց նաեւ հրատարակային Դասախօսութիւններ հայութիւնը Վիեննացիներուն ծանօթացնելու, եւ հայկական Համերգներ՝ օգտագործելով հայ երիտասարդութիւնը: 1923ին հայ Գաղութը մեծաթիւ հաւաքուած էր Միտիթարեան Արքայարանի սրահը շնորհաւորելու Գովրիկեան Արքահօր Ս. Զատիկ: Արքահայրը խօսք առաւ. «Դուք, ըսաւ, ինձի Զատիկ մաղթելու համար չէք հաւաքուած այսքան մեծաթիւ, այլ Հ. Ներսէսին շնորհակալ ըլլալու համար: Ես տուի զանի Ձեզի. ուրախ եմ որ օգտակար եղաւ Գաղութին»:

Աշխոյժ, եռանդ, ոգեւորութիւն Հ. Ակինեանի կեանքի ընկերներն եղած են միշտ: Անոր սիրտը եղած է միշտ արեւոտ, եթէ նոյն իսկ երկիրքը մատախրապատ ըլլայ եւ երկիրը սարսափներու մէջ: Ան խորատու-գուած է իր աշխատութեանց մէջ, իր մտքի լուսով կը կատարէ պեղումներ: Լաւատես է, որովհետեւ յոռետեսութիւնը կ'ատէ յոռի ըլլալուն համար: Անցուց հիւանդութեան, բանտարկելութեան օրեր, բայց զուարթ էր իր սիրտը, ծիծաղկոտ իր գէմքը: Կը պատմէ, թէ Երեւանի բանտին մէջ բանտակից մը կ'անուանէ զինքը «Երջանիկ մարդ»: «Ուրախ եմ, կը պատասխանէ Հ. Ակինեան, այսպէս կը կոչէին ընկերներս զիս նաեւ Վիեննա, ազատութեան օրերուս. ուստի բանտը փոփոխութիւն չէ պատճառած»: Նոյն երջանիկութիւնը կը փայլի այսօր ալ իր աչքերուն մէջ:

1927ին, երբ Հ. Ակինեան մալարիայէ ծանրապէս հիւանդացած, նոյն «Երջանիկ մարդու» տրամադրութեամբ, Երեւանի պե-տական հիւանդանոցը կը դարձանուէր, բժշկապետ Դիտր. Յովհաննիսեան իր օգնա-

կան բժիշկներէն մէկուն հրահանգ կու տայ որ սիրտն ու թոքերը քննէ: Վերջինս իրը արտանիշ կը վճռէ «ծերութեան հիւանդու-թիւն»: Հարցուցէք, կ'ըսէ բժշկապետը, թէ օրը քանի՞ ժամ կ'աշխատի: Կը պատասխանէ հիւանդը. «16 ժամ»: Բժիշկը դառնալով բժշկապետին կ'ըսէ. «Ապա կրկին օրական պէտք է ստանայ»:

Եւ սակայն Հ. Ակինեան իր համեստու-թեամբն ամբողջ կեանքին մէջ այս «կրկին օրական»ը ո'չ ստացաւ երբեք եւ ո'չ ալ ակն-կալեց: Ան աշխատեցաւ 50 տարիներ իրը անխոնջ Մշակ մը Հայադիտութեան դաշտին վրայ, զոր իր քրտինքով ուղղեց: Եւ երբ մենք, ինչպէս ընդհանրապէս ամբողջ Հայութիւնը, կը դիտենք այսօր այս մարդին վրայ իր կատարած այգեկութիւնը, երբ կը նկատենք իր անտիպ բազմաթիւ հատորներն եւ ամբարած քանի մը տասնեակ հազար Յի-շատակարաններու եւ մատենագրական նիւ-թերու հաւաքածոյքն, որոնք կը բարձրանան սակեղէց որաներու նման, կը մաղթենք որ տար Բարձրեալն իրեն երկար կեանք տես-նելու գէթ իր գլուխ զործոցին տպագրու-թիւնը. պահէր զինքը տակաւին նոյն երիտա-սարդական աշխուժին մէջ անդրադոյն վա-տակներու համար:

Հ. Վ. ԻՆՊԼԻՉԵԱՆ

**Հ. ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆԵԱՆԻ ԱՆԻՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1903

- 1. Եպիփան Կիրարացու «Εκθροισ προτοκλισητων πατοισοχων τε και μητοπολιτων (Հրատ. Ն. Ֆիեի, Էջմիածին): Հանդ. Ամս. ԺԷ (1903) 58—61:
- 2. Պետրոս Եպիսկոպոս Սիւնեաց: Հանդ. Ամս. ԺԷ (1903) 245—252. ԺԸ (1904) 18—22, 77—83, 105—113:

1904

- 3. Մովսէս Խորենացին եւ Բ. Տիգրեակիան ժողովը: Հանդ. Ամս. ԺԸ (1904) 38—46:
- 4. Հայոց թուականի հաստատութեան ժամանակը: Հանդ. Ամս. ԺԸ (1904) 97—102:
- 5. Նոննոսի Մեկնութիւնը Գրեգոր Ատուածաբանի հինգ ճառից: Անդ. 139—146, 165—173:
- 6. «Հայոց թուականի հաստատութեան ժամանակը» յօդուածի քննութեանց պատասխան: Անդ. 218—224:
- 7. «Սոսրովիկ Թարգմանիչ» եւ իւր երկասիրու-թիւնները: Անդ. 1904, 262—270, 304—316, 353—361, ԺԹ (1905), 19—22, 114—116, 213—220, 361—370:

8.—10 Armenische Bibliographie der Jahre 1905, 1906, 1907. Anzeiger für Indogermanische Sprach- und Altertumskunde. 24 (1909) 68—76; 25 (1910) 1—8; 27 (1910) 102—110.

1907

- 11. Աշուշայի կնիքը: Հանդ. Ամս. ԻԱ (1907) 121—126:
- 12. Դարձեալ Աշուշայի կնիքը: Անդ. 296—300:
- 13. Գրեգոր որդի Արասայ հեղինակ Պատճառաց Կրոց: Անդ. 132—135:
- 14. «Նմանեցուցանեմ» բային երկրորդ նշանա-կութիւնը: Անդ. 149—150:
- 15. Միտիթար Կաթողիկոսի 117. ամբաստանու-թեանց պատասխանադրին առ Կղեմէս Զ. Գահանայա-պետ: Անդ. 190—191:
- 16. Ծանիքը Մ. Խորենացու Պատմութեան եւ Աշխարհագրութեան մէջ: Անդ. 191:
- 17. Վիտի քաղաքն Մ. Այրիվանեցու ժամանա-կադրութեան մէջ: Անդ. 212—213:
- 18. Դուկաս Վ. Խարերդցի (ճանօթութիւն): Անդ. 224:
- 19. Պատճառաց Կրեքը: Անդ. 228—235, 271—274:
- 20. Հայ-վրական յարաբերութիւնը Դ.—Ի. դա-րուց մէջ: Անդ. 289—296:
- 21. Գրեգոր Մ. Ռափիկ Վկային նահատակութեան տարին 54½: Անդ. 317:
- 22. Ակնարկ մը հայ իրաւանց պատմութեան վրայ եւ Յ. Կարստի նոր երկասիրութիւնները: Անդ. 339—344, 358—362. ԻԲ (1908) 37—44, 215—219:
- 23. Թղթոց զբքին հաւաքելն եւ հաւաքման ժա-մանակը: Անդ. 371—374:

1908

- 24. Ուխտանէս Եպիսկոպոս պատմադիր: Անդ. ԻԲ (1908) 17—20, 70—74, 112—115:
- 25. Մագաղաթեայ Աւետարանի մը յիշատակա-րանը (1144էն): Անդ. 62—63:
- 26. Սրբապրութիւն մը (յէջն [1907] 291): Անդ. 64:
- 27. Վզենակ բարը: Անդ. 93—94:
- 28. Կարապետ Վ. Աղբիւնուարտեցի: Անդ. 94:
- 29. Դաւիթ Վ. Բորայրեցի: Անդ. 139—147:
- 30. Կիւրիոն Կաթողիկոս Վրաց: Պատմութիւն հայ-վրական յարաբերութեանց Ի. դարու մէջ: Գա-նանամեայ շրջան Հայոց եկեղեցական պատմութեան (1909), 14—21, 76—81, 103—106, 141—148, 176—181, 183—197, 257—267, 327—332:
- 31. Սահփանոս Առողիկ՝ գերմաներէն: Անդ. 219—220:
- 32. Հայերէն յիշատակարան մը (ԺԳ. դարէ) յունարէն աւետարանի մը մէջ: Անդ. 220—221:
- 33. Նկատողութիւն մը (նկատմամբ «Զարու-ճութեան»): Անդ. 221:
- 34. Վարդան Վ. Հաղարատցի: Անդ. 232—235:
- 35. Տիմոթէոս Կուզ հայ մատենագրութեան մէջ: Անդ. 261—265, 294—302:

- 36. Տիմոթէոս Ա. Աղեքսանդրացի: «Երանելոյն Տիմոթէոսի սրբոյ Եպիսկոպոսի Աղեքսանդրու ասա-ցեալի սուրբ Կոյսն Մարիամ եւ յողջոյն Եղիսարեթի»: Անդ. 324—327:
- 37. Հայոց Լեւոն Ա. Թագաւորի սուրբ: Անդ. 332—333:
- 38. Բառեր Տիմոթէոս Կուզի հակաճառութեան մէջ: Անդ. 383—384:

1909

- 39. Զաքարիա Եպիսկոպոս Գնունեայ եւ իւր տա-ղերը: Անդ. ԻԳ (1909) 231—238, 279—288, 341—345:
- 40. Վանկոյ Սուրբ Նշանը: Անդ. 312—314:
- 41. Կոստանդին Երզնկացույ վերագրուած ան-հարազատ տաղ մը: Անդ. 351—352:
- 42. Դիոսկորոս Աղեքսանդրացու մահուան տա-րին: Անդ. 352:
- 43. Յակոբ Երէց Կեսարացի. ԺԻ. դարու տաղա-սաց: Անդ. 371—374:
- 44. Nocheinmal armenische Nestoriana. Zeitsch. f. Kirchengeschichte. 30 (1901) 362—363:

1910

- 45. Վրթանէս Վ. Գերդոյ եւ իւր երկասիրու-թիւնները: Հանդ. Ամս. ԻԴ (1910) 8—11, 37—46:
